Երևանի պետական համալսարանում գործող
Բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ)
իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին
հասցե՝ ՀՀ 0025, Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ԱՐՄԵՆ ՀԱՅԿՅԱՆՑԻ

ԺԲ.00.03- Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված Ռուբինա Վարդանի Պետրոսյանի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների իրականացումը ՀՀ-ում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը նվիրված է ցանկացած հասարակությունում մշտարդիական և դժվարլուծելի հարցերի շրջանակի՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանությանը: Երեխան իր տարիքի և անչափահասության բերումով համարվում է առավել խոցելի և թիրախային կատեգորիա, իսկ երբ երեխայի կատեգորիան զուգորդվում է առանց ծնողական խնամքի մնալու հանգամանքի հետ, դրությունը մոտենում է հանրության և պետության համար վտանգավոր սահմանի, որից այն կողմ արդեն պետության և հանրության ֆիզիկական և բարոյական անվտանգության հարցն է: Ասվածից

արդեն պարզ է դառնում, թե որքան մեծ պետք է լինի պետության և հանրության հոգացությունը խնդրո առարկա հարցերի շրջանակի նկատմամբ:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանության, նրանց խնամքի և դաստիարակության կազմակերպման հարցում չկան մեկընդմիշտ ձևավորված մոտեցումներ ու մեխանիզմներ: Թիրախային այս խմբի հանդեպ հանրային և պետական մոտեցումներն անընդհատ փոփոխվում և վերանայվում են ժամանակին զուգահեռ՝ կախված երկրի սոցիալ-տնտեսական վիճակից, հանրության՝ գիտակցական մակարդակից ու բարոյական նկարագրից և բազում այլ գործոններից: Դա նշանակում է, որ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպումը ենթադրում է մշտական դիտարկումներ, մշտական ջանքեր՝ կատարելագործելու կիրառվող մեխանիզմներն ու մոտեցումները: Այս ուղղությամբ անուրանալի ներդրում կարող են լինել գիտական համալիր հետազոտություններն ու վերլուծությունները, որոնց շարքից է նաև հրապարակային պաշտպանության ներկայացված սույն ատենախոսական աշխատանքը: Վերը նշվածի ողջ գիտակցմամբ էլ հեղինակը մոտեցել է գիտահետազոտական իր պարտականություններին և այդ պատասխանատվությամբ էլ կատարել է գիտական աշխատանքը: Մեր խորին համոզմամբ և գնահատմամբ՝ ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը կասկածից վեր է:

Ատենախոսը գիտական հետազոտությունը կատարել է անհրաժեշտ և ենթադրվող գիտական քայլերի հաջորդականությամբ: Այդ ուղղությամբ առաջին քայլը եղել է գիտական նպատակադրումը, այն է՝ <<Խնամակալության (հոգաբարձության) ու խնամատարության ներքո գտնվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների իրականացման տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունը և դրանց հետագա կատարելագործմանն

ուղղված օրենսդրական բնույթի առաջարկություններ ներկայացնելը>>: Գիտական նպատակին հետամուտ՝ դրվել են մի ամբողջ խումբ գիտական խնդիրներ, որոնց մեկառմեկ լուծման արդյունքում ատենախոսին հաջողվել է իրապես հասնել նպատակին և հանրության դատին ներկայացնել իսկապես բարձրարժեք գիտական հետազոտություն, որը կարող է լուրջ ներդրում լինել քննարկվող բնագավառի բարեփոխումների և բարելավումների ուղղությամբ Ասվածի վկայությունն է հանդիսանում գիտական եզրահանգումների և օրենսդրական բնույթի առաջարկությունների առատությունը: Աներկբա է ատենախոսի գիտական՝ նպատակասլացությունը, ստեղծագործականությունը, նախաձեռնողականությունը և համարձակությունը, որոնք լրացուցիչ համոզչականություն են հաղորդում ատենախոսական ուսումնասիրությանը:

Ատենախոսական աշխատանքը կատարվել է այնպիսի բովանդակային համակարգայնությամբ, տրամաբանությամբ և կառուցվածքով, որը հնարավորություն է տալիս գիտական խնդիրներին և դրանց լուծումներին ծանոթանալ ընդհանուրից հատուկին և վերացականից կոնկրետին գնացող ճանաչողական անցումներով:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ թվով 10 պարագրաֆներով, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության մանրամասն ուսումնասիրությունը վկայում է, որ հեղինակը կատարել է թեմային նվիրված համալիր և ավարտուն աշխատանք՝ օգտագործելով ինչպես ընդհանուր գիտական մեթոդներ, մասնավորապես՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի, այնպես էլ մասնավոր գիտական մեթոդներ, մասնավորապես՝ իրավահամեմատական, համակարգակառուցվածքային, վիճակագրական:

Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված թվով 7 գիտական հոդվածներում, ինչպես նաև սեղմագրում:

Ատենախոսության և սեղմագրի ծավալն ու ձևավորումը համապատասխանում են ԲՈԿ-ի կողմից սահմանված կանոններին:

Միևնույն ժամանակ, նշված դրականությամբ հանդերձ՝ ներկայացված ատենախոսությունում առկա են առանձին դրույթներ և եզրահանգումներ, որոնք միանշանակ չեն ընկալվում, բանավիճային են, և որոնց վրա կցանկանայինք հրավիրել ատենախոսի ուշադրությունը՝ դրանց վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ և հիմնավորումներ ունենալու ակնկալիքով.

1. Պաշտպանության ներկայացվող դրույթներից 4-րդ կետի ներքո արտացոլված դատողությունն առ այն, որ խնամակալության մարմնին գործուն երաշխիքներով ապահովելը պահանջում է առանց վերջինիս թույլտվության կնքված՝ խնամարկյալի գույքի տնօրինմանը, ինչպես նաև խնամարկյալի գույքի նվազեցմանը հանգեցնող կամ փաստացի խնամարկյալի գույքային դրությունը վատթարացնող ցանկացած վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման պահանջի ներկայացման պարտավորության ամրագրում, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագիրը կնքվել է ի շահ խնամարկյալի, մեր կարծիքով խնդրահարույց է: Այսպես, Քաղաքացիական օրենսգրքի 310-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ 14-ից մինչև 18 տարեկան անչափահասի կողմից, առանց իր ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնության կնքած գործարքը, այն դեպքերում, երբ նման համաձայնությունը պահանջվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, դատարանով կարող է անվավեր ճանաչվել ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի հայցով: Կարծում ենք, գործող կարգավորումը և առկա իրավական գործիքակազմն արդեն իսկ միտված են խնամարկյալի գույքային շահերի պաշտպանությանը: Սա արդարացված է նաև մեր երկրում խնամակալության և հոգաբարձության գործող մարմինների պարագայում, հատկապես երբ հեղինակն աշխատանքում բազմիցս բարձրացնում է ՀՀ-ում գործող խնամակալության և հոգաբարձության

մարմինների արհեստավարժ գործունեության հետ կապված հիմնախնդիրները և հիմնավորումներ ներկայացնում մասնագիտացված խնամակալության և հոգաբարձության մարմինների ստեղծման անհրաժեշտության մասին: Բացի այդ, խնամակալության և հոգաբարձության մարմնին գործարքի անվավերության պահանջի ներկայացման իրավունքի վերապահումը միանշանակ չէ նաև «իրավական շահագրգռվածության» կոնցեպտի համատեքստում:

2. Ատենապետության 146-147-րդ էջերում հեղինակն առաջարկել է Քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասում կատարել լրացում, համաձայն որի՝ անչափահասի խնամակալներ և հոգաբարձուներ չեն կարող նշանակվել այն անձինք, որոնք չունեն մշտական բնակության վայր, ինչպես նաև այնպիսի բնակելի տարածություն, որը համապատասխանում է սահմանված սանիտարական և տեխնիկական պահանջներին, եթե պետք է համատեղ բնակվեն խնամարկյալի հետ և խնամարկյալը չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ սահմանված սանիտարական և տեխնիկական պահանջներին համապատասխանող բնակելի տարածություն: Կարծում ենք, որ այս առաջարկը խնդրահարույց է, քանի որ խնամակալին և հոգաբարձուին նման իմպերատիվ պահանջ առաջադրելով, նվազեցնում ենք առանց ծնողական խնամքի մնացած երեխայի անհատական դաստիարակության իրականացման, խնամքի և դաստիարակության ընտանեկան ձևի ներքո տեղավորման հնարավորությունը, հատկապես, երբ օրենսդիրն Ընտանեկան օրենսգրքում ընդգծել է ընտանեկան դաստիարակության նախապատվելի լինելու հանգամանքը: Մինչդեռ, օրինակ երեխայի մերձավոր ազգականները կարող են չունենալ նման բնակարանային պայմաններ, բայց երեխայի հետ ունենան ջերմ ընտանեկան հարաբերություններ, պատրաստակամ լինեն ընդունելու ընտանիք և կարող են պատշաճ իրականացնել երեխայի խնամքն ու դաստիարակությունը:

3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հեղինակն ատենախոսությունում առաջ է քաշել մասնագիտացված խնամակալության և հոգաբարձության

մասնագիտացված մարմնի ստեղծման գաղափար և առաջնային օղակում երեխաների իրավունքների պաշտպանության ապահովման առումով մասնագիտացված խնամակալության և հոգաբարձության մարմինների ստեղծման հրամայականը, ապա աշխատանքը կշահեր, եթե հեղինակն ատենախոսության մեջ արված՝ առաջարկների համակարգմամբ ներկայացներ «Մասնագիտացված խնամակալության և հոգաբարձության մարմիններ»-ի ստեղծման հայեցարկարգը՝ ՀԱՎԵԼՎԱԾԻ տեսքով:

Վերոնշյալով հանդերձ՝ պետք է ասել, որ ներկայացված նկատառումները չեն արժեզրկում, ընդհանուր առմամբ՝ հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն անխոցելի տեսնելու ցանկությամբ:

Ռուբինա Պետրոսյանի հեղինակած ատենախոսությունը բնութագրվում է ներքին ամբողջականությամբ, հանդիսանում է արդիական, տեսական և գործնական առումով՝ արժեքավոր: Այն շարադրված է գրագետ հայերենով, աչքի է ընկնում ինքնուրույն ձևակերպումների և սեփական դատողությունների առատությամբ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Ռուբինա Պետրոսյանի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների իրականացումը ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունն իրենից ներկայացնում է համակարգային, համալիր և ավարտուն հետազոտություն:

Ընդդիմախոսության ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է ԺԲ.00.03 <<Մասնավոր իրավունք>> մասնագիտությանը (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք), բավարարում է ՀՀ կառավարությա 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, և հեղինակն

արժանի է «Իրավաբանական գիտությունների թեկնածու» գիտական աստիճանի շնորհման:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Ա.ՀԱՅԿՅԱՆՑ

13.12.2021թ.

«Ա. Հայկյանցի ստորագրության իսկությունը հաստատում եմ»՝

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՏԵՂԱԿԱԼ՝

ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝

Հ. ԽԱՉԻԿՅԱՆ